ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԱԲՆԱԿ ԿԱՆԱՆՑ ԵՎ ԴԵՌԱՀԱՍ ԱՂՋԻԿՆԵՐԻ ԿԵՆՑԱՂԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒ ՉՎՃԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎՐԱ

Հեղ.՝ Սեդա Հակոբյան

Սույն հետազոտական զեկույցը պատրաստվել է համանուն հետազոտության հիման վրա, որը իրականացրել է Սեդա Հակոբյանը Հայաստանում կանանց հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ: Հետազոտական զեկույցում արտահայտված կարծիքներն ու տեսակետները հեղինակինն են եւ պարտադիր չէ, որ արտացոլեն Հայաստանում կանանց հիմնադրամի պաշտոնական դիրքորոշումները:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ԿԱՆԱՆՑ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

2025թ.

Բովանդակություն

Ներածություն.....3

Հետազոտության արդիականություն, նպատակ, մեթոդաբանություն.....5

Հետազոտության իրականացման ընթացքը և արդյունքները.....9

Հետազոտության դուրսբերած խնդիրները.....16

Առաջարկություններ.....32

Ավարտ.....34

Ներածություն

«ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԱԲՆԱԿ ԿԱՆԱՆՑ և ԴԵՌԱՀԱՍ ԱՂՋԻԿՆԵՐԻ ԿԵՆՑԱՂԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒ ՉՎՃԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎՐԱ» հետազոտությունը իրականացվել է Հայաստանում կանանց հիմնադրամի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում:

Կլիմայական խնդիրները աշխարհում սկսել են վերջին տարիներին սպառնալիք լինել մարդկանց բարեկեցության, երբեմն նաև՝ ապրելակերպի, ազատ տեղաշարժի, անվտանգության և առողջության համար: Վերջին շրջանում աշխարհում տեղի ունեցող աղետները տարբեր բնույթի և ուժգնության են եղել: Դրանցից որոշները խլել են մարդկային կյանքեր, որոշները ժամանակորապես խոչընդոտել են մարդկանց ազատ տեղաշարժին, երկրների տնտեսական կայունությանը, բնական և մարդածին երևույթների խեղաթյուրմանը, ինչպես նաև տարածքներում ապրող կենդանիների թվականի և ցեղատեսների բազմազանության զգալի կրճատման:

Կլիմայական փոփոխությունները անմասն չեն թողնում ոչ մի հասարակության և աշխարհամասի: Հայաստանում ևս, պայմանավորված տարբեր հանգամանքներով և զարգացումներով, ինչպես նաև՝ տարատեսակ երկարատև ռազմական գործողություններով, հանգեցրել են կլիմայական աղետների: Դրանք վերջին տարիներին երևացել են ջրհեղեղների, անոմալ ջերմաստիճանի, ձնածածկույթի կրճատման, հողերի չորացման, ջրի մակարդակի քչացման և շատ տարբեր դրսևորումներում:

Հայաստանում մարզային բնակավայրերը հիմնականում ստանում են իրենց եկամուտը և ապահովում իրենց զբաղվածությունը գյուղատնտեսական աշխատանքներում ներգրավվածության պայմաններում: Գյուղատնտեսությունը հատկապես զգայուն է կլիմայական փոփոխություններից:

Ուստի, սույն հետազոտությունը միտված է բացահայտելու վերջին շրջանի փոփոխությունները և դրանց առաջացրած խնդիրները կանանց, նրանց ընտանիքի անդամների՝ հատկապես դեռահասների շրջանում:

2025թ.

Հետազոտության արդիականություն

Սույն հետազոտությունը կարևոր է որպես իր տեսակի մեջ հազվադեպներից՝ կախված թեմայից և իրականացման ուղղվածությունից։ Ցավոք, հետազոտական դաշտը Հայաստանում միշտ չէ, որ ընդգրկում է գենդերային ասպեկտը, հատկապես, երբ կանայք չեն դիտարկվում որպես աշխատողներ, գումար վաստակողներ, հոգս հոգացողներ։ Սակայն փորձը ցույց է տալիս, որ ոչ միայն հանդիսանում են, այլև որոշ ընտանիքներում և համայնքներում նրանք միակ կերակրողն են կամ հավասարապես ներգրավված են և՛ դրսի աշխատանքներում, և՛ հավելյալ իրականացնում են իրենց վրա դրված մշտական պատասխանատվությունը՝ չվարձատրվող աշխատանք տանը։

Կլիմայական փոփոխությունները Հայաստանում դեռևս չեն դիտարկվում և ուսումնասիրվում այնպես, ինչպես կհանդիպենք օրինակ արևմտյան կամ այնպիսի հասարակություններում, որտեղ կապիտալիստական մղումները, կլիմայական աղետների ակնհայտությունը, տնտեսության և մարդկանց կյանքի վրա ազդեցությունը ակնհայտ է և չօտարված կամ չմերժված։

Ցավոք, վերոնշյալով է պայմանավորված նաև գիտական գիտելիքի բացը, որին հանդիպեցի հետազոտության գաղափարը, դիզայնը մշակելիս և հետազոտությունն իրականացնելիս։

Ինչպես նաև, նկատվում է բնապահպանական ակտիվիզմի և շարժման դանդաղ մարելը և պառակտվելը, ինչը պայմանավորված է փաստերի և փաստաթղթերի սակավությամբ և շատ այլ հանգամանքներով։

Ուստի, հետևյալ հետազոտությունը կարող է ծառայել որպես գենդերային հավասարությանը, բնապահպանական ջատագովությանը և շահերի պաշտպանությանն ուղղված գործունեության հայալեզու փաստահեն գործիք։

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել կլիմայական փոփոխությունների ազդեցությունը ՀՀ գյուղական բնակավայրերում ապրող կանանց և նրանց գյուղատնտեսական գործունեության մեջ օգնողների կյանքի վրա։

Հետազոտության առարկան այս աշխատանքի շրջանակներում հետևյալն է.

Կլիմայական փոփոխությունների սոցիալ-տնտեսական և հոգեբանական ազդեցությունը ՀՀ գյուղական բնակավայրերում ապրող կանանց և նրանց ընտանիքների վրա։

Սույն հետազոտական նպատակից բխում են հետևյալ **հետազոտական խնդիրները**.

- Ինչպիսի՞ կլիմայական փոփոխություններ են արձանագրվել վերջին տարիներին ՀՀ գյուղական շրջաններում
- Ի՞նչ ազդեցություն են ունենում կլիմայական փոփոխությունները կանանց և նրանց ընտանիքների գյուղատնտեսական գործունեության վրա
- Ի՞նչ սոցիալական և հոգեբանական հետևանքներ են ունենում կլիմայական փոփոխությունները կանանց և նրանց ընտանիքների վրա։

Հետազոտության իրականացման համար ընտրել եմ **հետևյալ հետազոտական մեթոդաբանությունը.**

- Խորքային հարցազրույցներ գյուղաբնակ կանանց և նրանց ընտանիքի անդամների հետ
- Հարցում գյուղական համայնքներից այլ համայնքներ տեղափոխված անձանց հետ

Հետազոտությունն իրականացնելու համար նախնառաջ ուսումնասիրել եմ արդեն իսկ գոյություն ունեցող փաստաթղթերը, որոնք երբևէ գոյություն են ունեցել հայկական մեդիայում՝ կլիմայական փոփոխությունների, բնապահպանական գործունեության մասին։

Հայկական մեդիայում նախորդիվ գործել են էջեր, ալիքներ, որտեղ կարող ենք գտնել հին հոդվածներ կլիմայական փոփոխությունների մասին, սակայն չենք հանդիպում թեմաներ, որոնք հատկապես վերաբերում են կանանց։

Կլիմայական փոփոխությունները և դրանց ազդեցությունների շրջանակը, փաստորեն, չի ներառում գենդերային ասպեկտը այնքան, որքան իրականում այն ներառված է և վերաբերելի։ Ցավոք, փորձը ցույց է տալիս, որ կլիմայական փոփոխությունները, աղետները, բնապահպանական փոփոխությունները ամենատարբեր ազդեցությունն են ունենում կանանց կենսակերպի և առօրյայի կազմակերպման վրա՝ աշխարհի տարբեր շրջաններում։ Որոշ շրջաններում կանայք ուղղակիորեն հայտնվում են շրջապտույտի մեջ, երբ նրանց ամեն օրը և կենցաղի կազմակերպումը կախված է տարածքում խմելու և ոռոջգման ջրի առկայությունից, ջերմաստիճանի համապատասխանությունից, եկամուտների առկայությունից։

Թվարկածս խնդիրները, միգուցե թվա, թե ավելի շատ վերաբերում են այլ երկրների, սակայն պարզ է դառնում, որ Հայաստանում ևս կան գյուղեր, որտեղ մարդիկ ապրում են առանց խմելու ջրի, տարրական կենցաղային պայմանների, կան առողջական խնդիրներ, որոնք առաջացել են հենց բնապահպանական աղետներից, կլիմայական փոփոխություններից։ Պարզ է դառնում, որ նաև ներքին միգրացիան պայմանավորող հաճախ հանդիպող գործոն է կլիմայական փոփոխությունների պատճառով առաջացած առողջական հարցերի, եկամտի միակ աղբյուրը կորցնելու, ընտանիքների մասնատման և շատ այլ երևույթների պատճառով տեղի է ունենում ներքին միգրացիան. կարելի է այսինքն համարել, որ ներքին միգրացիայի գործոններից մեկը

կլիմայական փոփոխությունների առաջացրած հետևանքների և մարդկանց՝ իրենց բնակավայրում ապրելու և ստեղծելու անհնարինությունն ու անհամապատասխանությունն են։

Այս և այլ հարցերի շուրջ իրականացրած ուսումնասիրությունս իրականացրել եմ ՀՀ մարզերում գյուղական բնակավայրեր այցելելով, տեղում բնակիչների հետ խորքային հարցազրույցներ և խմբային քննարկումներ իրականացնելով։

Հետազոտության իրականացման ընթացքը և արդյունքները

Ըստ NCEI NOAA National Center for Environmental Information -ի տարեկան հերթական զեկույցի, Երկիր մոլորակի վրա ջերմաստիճանը 2024 թվականի դրությամբ կազմել է 15 աստիճան Ցելսիուս, որը աճել է 0,06 աստիճանով 1850 -ից սկսած (այս թվականից սկսվել է ջերմաստիճանի ուսումնասիրման գիտական գործընթացը)։

Ըստ նրանց ամսական զեկույցի, որի վերջին համարը հրապարակվել է 2025 թվականի փետրվարին, 2024 թվականը համարվում է 1850-ից ի վեր ամենատաք տարին։ Այն 20-րդ դարի միջին ջերմաստիճանից բարձր էր 13,9 աստիճանով։ Հետևապես, 2015-2024 թվականները համարվում են ջերմաստիճանի հավաքագրման ողջ պատմության ընթացքի ամենատաք տասը տարիները՝ այն պարզայում, երբ տարեցտարի այդ ջերմաստիճանը աճել է։ Համաշխարհային մակերևույթի ջերմաստիճանը, պարզ ասած, ինդիկատորն է նրա, թե որքա՞ն արևի լույս է Երկիրը կլանում, և որքա՞ն՝ ռադիացնում հետ դեպի Տիեզերք. այսինքն Երկրի էներգիայի բալանսն է։ Երբ այս ցուցիչները նույնն են, ջերմաստիճանը մնում է նույնը՝ հստակ։ Երբ դրանք տարբերվում են, Երկիրը սկսում է սառչել կամ տաքանալ։ Երկրի միջին մակերևութային ջերմաստիճանը աճում է մարդկանց արտադրած ջերմոցային գազերի աճի պատճառով։ Սովորական գազերի արտադրած էներգիան և ջերմաստիճանը հետ են ռադիացվում Տիեզերք, իսկ ջերմոցային գազերի արտադրածը՝ տարածվում շրջակայքում, տաքացնում Երկրի մակերեսը, անգամ երբ Արևը մարել է, մայր է մտել։

Բացի էներգիայի բալանսի պատասխանատուն լինելուց, մակերևույթի ջերմաստիճանը նաև այլ՝ կենսական կարևոր գործընթացների պատասխանատուն է շրջակա միջավայրում և էկոլոգիայում։ Այս գործընթացներից յուրաքանչյուրը պատասխանատու է մարդկանց կյանքի, ջրի շրջապտույտի համար։ Այն պատասխանատու է նաև այնպիսի հարցերի համար, ինչպիսին են, թե ինչպիսի՞ կենդանիներ կարող են գոյություն ունենալ Երկրի վրա, ի՞նչ բույսեր, ո՞րտեղ և այլն։

Կարևոր է ուշադիր լինել և կրճատել որոշ գործողություններ, որոնք երբեմն անում ենք չմտածված։ Այն իրավիճակները, որոնք արդեն իսկ հետևանքներ են առաջացրել, կարիք ունեն վերանայման, արգելքների, տույժերի սահմանման, փոխհատուցման և կանխարգելիչ միջոցների կիրառման։

Սույն հետազոտություն իրականացնելու միտքը եկել է վերջին շրջանում մտահոգիչ դարձած կլիմայական փոփոխությունները կողքից դիտարկելու և կանանց փորձառությունը պատկերացնելու ֆոնին։ Իհարկե, մինչև այդ էլ հետաքրքված եմ եղել, թե աշխարհում որքան բան է աննկատ տեղի ունենում, որոնց մասին մենք տեղյակ չեն, ոմանք էլ՝ երևի երբևէ չեն էլ ենթադրի կամ ընդունի, որ մարդու ձեռքով, մարդու համաձայնությամբ աշխարհում տեղի են ունենում նման դեպքեր։ Ուստի, միևնույն ժամանակ վախեցած լինելով տեղի ունեցողից, և հետաքրքրված լինելով, թե հատկապես մարզային տարածքներում ինչպե՞ս են վերաբերվում փոփոխություններին ու ինչպե՞ս են համակերպվում կամ դիմադրում, որոշեցի շրջել մարզերով, լինել տներում, այգիներում, ճանապարհներին ու գյուղամիջերի՝ հիմնականում տղամարկդկանց հավաքատեղիներում, հարցեր տալու, մերժվելու, ճանաչելու ու այլ հետաքրքիր գործընթացների որոնումների ալիքներում լինել։

Ի սկզբանե պատկերացնում էի, որ յուրաքանչյուր մարզում կարող եմ այցելել երեք գյուղ, երեք առանձին մարդու հետ զրուցել և հավաքագրել պատմությունը։ Որոշ մարզերում այս սխեման աշխատել է, հաշվի առնելով, որ տարբեր տարածքներում տարբեր են եղել պատմությունները, գյուղերը եղել են հասանելի։ Սակայն, որոշ տարածքներում ստացվել է, որ և՛ տրանսպորտի հասանելիության, և՛ պատմությունների հանդեպ որպես հետազոտող կիսատության զգացում չունենալու համար ընտրել եմ մեկ գյուղ՝ հաշվի առնելով տեղադիրքը, բնակչությունը, համայնքի ռեսուրսները, գյուղատնտեսական ու տնտեսական զարգացվածությունը, կլիման և այլ՝ հետազոտության համար կարևոր գործոններ։ Ստացվել է երբեմն, որ մեկ պատմությունը հետո ավարտուն տեսքի բերելու ու ավելի ամփոփ պատկերացում

կազմելու համար մնացել եմ մեկ գյուղում, այցելել այլ տներ ևս, որովհետև նաև հետաքրքրված եմ եղել հատկապես գտնելու կանանց, ովքեր ոչ թե հենց այն բնակավայրից են, որտեղ իրականացնում եմ այցս, այլ ներքին միգրանտ են հանդիսանում, օրինակ տեղափոխվել են ամուսնության նպատակով, կամ եկել են ԼՂՀ-ից։

Արդյունքում ստացվել է հետաքրքիր, ջերմացնող, միևնույն ժամանակ տխուր և մտահոգիչ տեղեկատվություն Հայաստանում մարզային կյանքի, գյուղաբնակ համայնքներում ապրող անձանց ունեցած առօրյա դժվարությունների և կանանց կյանքի դետալների մասին։ Որպես ծրագրի հետազոտող և մարդ, ով որոշակիորեն կիսում է գյուղաբնակ անձի փորձառությունը, կարիք եմ ունեցել իմ փորձառությանը և էմոիցաներին մոտենալ վերապահումներով՝ չեզոք պահելով հետազոտությունը սեփական ապրումներից և ակտիվիստական մղումներից։

Հետազոտության սկզբնական փուլում կարևոր էր ուսումնասիրել նաև Հայաստանում կլիման և համեմատել դա իրականության՝ ներկա կլիմայական վիճակի հետ։

Կլիման Հայաստանում մերձարևադարձային է՝ չորային ու ցամաքային։ Աշխարհագրական տեղադիրքի հետ մեկտեղ կլիմայի ձևավորման մեջ մեծ դեր են խաղում երկրի ռելիեֆը և լեռնաշղթաներով պաշտպանվածությունը։ Էական են Մեծ Կովկասի լեռնահամակարգը, Կասպից և Սև ծովերի մերձավոր տեղադիրքը, նաև Իրանական և Փոքր Ասիական բարձրավանդակների հարևանությունը։

Ջերմաստիճանի և խոնավության ռեժիմների ձևավորման մեջ Հայկական լեռնաշխարհի վրա օդային շրջապտույտը ունի կարևոր նշանակություն։ Այս տարածքում հիմնականում գերակշռում է օդային զանգվածների արևմտյան ուղղությամբ տեղաշարժը, որի հետևանքով Հայաստանի տարածքում տեղի է ունենում խոնավության ներհոսք։ Միաժամանակ օդային շրջապտույտի

տատանումները ժամանակի մեջ պատճառ են դառնում ինչպես սեզոնային, այնպես էլ տեղումների երկարատև փոփոխությունների, որի արդյունքում էլ փոփոխվում է ջրահոսքը:

Օդային զանգվածները շարժվելիս հանդիպելով լենաշղթաներին, հարկադրաբար շրջանցում են կիրճերն ու գետահովիտները: Այդ պայմաններում առաջանում են ուղղահայաց հոսքեր, որի արդյունքում փոփոխվում է օդերևութաբանական ռեժիմը՝ մասնավորապես օդի ջերմաստիճանը և տեղումները:

Հայաստանի Հանրապետությունում տեղումները մեծամասամբ լինում են գարնան ամիսներին, մասամբ նաև աշնանը: Արաքսի ավազանի ցածրադիր հովիտներում ամենից քիչ տեղումներ լինում են ամռան ամիսներին: ՀՀ հյուսիսային շրջաններում տեղումները մեծ մասամբ թափվում են ամռանը: Դա բացատրվում է Սև ծովի գոլորշիներով, որոնք երկիր են թափանցում գերազանցապես տարվա տաք ամիսներին:

Գարնանային, մասամբ նաև ամառային անձրևները հաճախ կրում են տեղատարափ բնույթ, որի հետևանքով, ինչպես նաև ձնհալի պատճառով, երբեմն տեղի են ունենում գետերի մակարդակի արտասովոր բարձրացումներ և ուժեղ հեղեղումներ:

Հետազոտության ընթացքում, սակայն, պարզ դարձավ, որ վերջին տարիներին իրավիճակը դրսևորվել է ոչ թե հազվադեպ դեպքերում, այլ փոփոխությունները նկատելի են հենց առօրյայում:

Ես շրջել եմ ՀՀ մարզերում, և երբեմն հանդիպել կանանց, ընտանիքների, ովքեր հուսահատ նայում էին տան առջև՝ բակում կոտրված ծառին, ծառի տակ թափված դեռևս չհասունացած բերքին, կոտրված տնկիներին, աղետներից տուժած անասուններին կամ մարգերին և խնդրում էին նկարել դրանք: Կարծես նկարելը և

պահպանելը ևս մի ապահով ապացույց լինի առ այն, որ այս կանայք, այս ընտանիքները երբեմն մենակ ու մեկուսացած են զգում. իրենք են և իրենց խնդիրները։

Այսպիսով, որոշ մարզերում այցելել եմ երեք տարբեր, իրարից հեռու համայնքներ, որոշ մարզերում եղել եմ մեկ համայնքում, սակայն երեք առանձին և բնույթով, ապրելակերպով ու վերաբերմունքով իրարից տարբեր երեք տներում։

Վերջին շրջանում, ինչպես պատմում էին ինձ հանդիպած մարդիկ, համայնքապետարանների և գյուղապետարանների աշխատակիցները, տեղումները անսպասելի և ուժգին են լինում։ Որոշ մարզերում տեղացիները պատմում էին, որ իրավիճակը այս տարի անորոշ և խաբուսիկ է եղել. նախ ուշացրել են վարելու և ցանելու փուլը, ապա բերքը մսացել է արևի տակ՝ որոշ տեղերում, որոշ տեղերում էլ՝ անընդհատ անձրև և կարկուտ է տեղացել։ Գյուղացիները նաև պատմում էին, հրավիրում՝ ցույց տալու, թե չփչացած և հասած բերքը ինչպես էր փռվել ծառի տակ՝ կարկուտի հարվածներին չդիմանալով, իսկ մյուս օրն էլ հավաքելիս նկատել էին, որ այն արդեն փչացած է, ուժգին կարկտահարված։ Բնակիչները նշում էին, որ կարկտահարված բերքը ոչ ոք չի գնում, այն էլ՝ նորմալ բերքի գնով։ Հարցիս, թե արդյո՞ք պետական միջոցներ ու հավաքագրողներ կան, ովքեր շրջում են գյուղերով, ճասի գնահատում անում, ապա գալիս և թեկուզ ավելի մատչելի գներով առնում բերքը մեր քաղաքացիներից և վճարում նրանց, գյուղացիները պատասխանեցին, որ հիմականում չկան կամ ակնկալվածի պես չեն գործում այդ ծառայությունները։ Ոմանք հիասթափված նշեցին, որ արդեն քանի տարի է, ինչ հույսները կտրել են պետական մարմինների հետ համագործակցությունից. գյուղացիներից մի քանիսը

նշեցին, որ եղել է, որ այնքան հիասթափված և էմոցիոնալ են եղել, որ այդ բերքը անգամ անասնակերի կամ ավելի ցածր գնով չեն վաճառել, ուղղակի դեն են նետել։

Ցավոք, կանայք պատմում էին նաև պետության հետ համագործակցության այլ դժվարությունների մասին։ Փաստորեն, չկան մարզեր ու համայնքներ, որոնք այս տարվա ընթացքում տեղի ունեցած հորդառատ անձրևներից, կարկուտից, մրրիկներից վնասներ չեն կրել։ Իհարկե, որոշ մարզերում ջարդվել են նաև տներ և վարարել են գետեր, ամբողջությամբ կամ մեծամասամբ ջարդվել են տնկիներ, արդեն հասած բերք, ծաղիկներ, տան տանիքներ և գյուղատնտեսական տեխնիկա, սակայն որոշ համայնքներ ուղղակի չեն տեսնում ապագա։ Մարդկանց համար ցավալին այն է, որ պետության աջակցությունը հիմնականում չեն զգում, եթե զգում էլ են՝ ապա դա ընտրողաբար է, անհամապատասխան նրանց կարիքներին ու կրած վնասին, տանջանքին, որը ըստ գյուղացիներից շատերի՝ տանում են միայնակ, առանց հստակ ու համակարգված աջակցության։

Այս հարցի շուրջ, գրեթե բոլոր զրույցներում լսել եմ նույնակերպ պատասխաններ.

- «հավերժ քաշում ենք մենակ, առանց պետության, ոնցոր մենք էս պետության քաղաքացին չլնենք. անտեր ենք»։
- «Իսկ ի՞նչ անի պետությունը, կարող ա պետությունը տեղյակ էլ չի»։

Կարելի է ենթադրել, որ «պետություն» ասելով այս անձինք նկատի ունեն մարդկանց, կառավարություններին, նախարարություններին կամ անգամ վերացական խմբերի, ովքեր պետք է որ լինեին իրավիճակի պատասխանատուն։

Ցավալիորեն, որոշ համայնքներում այս վերացական դիմումը և անպաշտպանության զգացումը կանանց համար դրսևորվում է ցածր օղակներից մինչև ամենաբարձրը՝ պետությունը։

Ներքոնշյալ շարադրվածում կտեսնենք, որ կանայք երբեմն չունեն ապավեն ու հենարան տանը՝ ամուսնու, հայրական ընտանիքի, ամուսնու հայրական ընտանիքի, , հարևանների և այլ միությունների, համայնքի, մարզի, ապա նաև պետության մասշտաբով։ Կտեսնենք նաև, թե որքան վերացական և որքան երբեմն «հոգնած» է այդ սպասումն ու ջղայնությունը, որը վերածվում է անպաշտպանության, անտարբերության և ինձ հետ զրույցներում երբեմն հնչում ցածր, շշուկով, երբեմն էլ կատակով, որին հաջորդում է «դե դու աղջիկ ես, կհասկանաս» մխիթարանքը։

Իրավիճակը ամենատարբեր դրսևորումներն ունի տարբեր մարզերում, չնայած որ դրանք իրար մոտիկ են կամ երբեմն նույն մշակույթն են կիսում։ Իրավիճակը տարբեր է ու տարբեր ձևով է անդրադառնում նաև մարզի ներքին ռեսուրսներն ու պաշարները, բնակչության կենսամակարդակը և այլ եկամտի աղբյուրները հաշվի առնելով։

Եվ իրավիճակ ասելով այստեղ հասկանում ենք ոչ միայն կլիմայական խնդիրները և համայնքներում առաջացած իրադրությունը՝ փոփոխությունների հիմքով, այլև կանանց կյանքի և կենցաղի կազմակերպման, առողջության, համայնքում ընդունման, հավասար հնարավորությունների, վերարտադրողության և շատ տարբեր հացերի համախումբը։

Հետազոտության դուրսբերած խնդիրները

Առանձնացրել եմ հիմնական խնդիրները, որոնց շուրջ կուզեմ հրավիրել պատկան մարմինների, նախաձեռնող խմբերի, ֆեմինիստական կառույցների և ակտիվիստների ուշադրությունը։ Կարևոր է, որ ինֆորմացիան և բազմաշերտ խնդիրները բարձրաձայնվեն և հասցեական հնչեն հնարավոր տարածքներում, նաև ի սոլիդարություն կանանց, ընտանիքների, դեռահասների։ Զրուցակիցներս հաճախ նշում էին, որ երբեմն չգիտեն՝ ու՞մ հետ զրուցել, որովհետև այդ խարանը առկա է կանանց հանդեպ՝ չբողոքելու, «լավ կին», «լավ մայր», «ուժեղ» լինելու, տան ներսում եղածները չպատմելու, դժվարություններից չընկճվելու մասին։ Սրանից բացի, նաև նշում էին, որ երբեմն վարանում են խոսել, քանի որ և՛ չունեն զգացողություն, որ դիմացինները կհասկանան ու կտիրապետեն այս թեմաներին, և՛ չունեն «այդ թույլտվությունը»։

Կանայք ունեն աշխատատեղի խնդիր. Ինչպես գիտենք, բացառություն չեն կազմում դեպքերը, երբ գյուղերում կամ փոքր քաղաքներում, այժմ նաև՝ խոշորացված համայնքներում չկան աշխատատեղեր։ Այս խնդիրը հատուկ է գրեթե բոլոր գյուղերին. որոշները բարեբախտաբար մոտ են մարզկենտրոններին կամ մայրաքաղաքին, և կենտրոնացման ցավոտ փորձի արդյունքում մարդիկ ունեն աշխատանք, ավտոմեքենա կամ գոնե կապ այլ համայնքների հետ։

Բացի դրանից, կանայք հանդիսանում են խնամողներ, ունեն անչափահաս երեխաներ, մեծահասակներ, հիվանդություն ունեցող ընտանիքի անդամներ, ում հետ լինելը և կենցաղում նրա խնամքը տեղավորելը ուղղակիորեն խոչընդոտում են նրանց՝ աշխատելու, ուսում ստանալու, և շատ տարբեր կենսական կարևոր գործողություններից։ Հաճախ խնդրի մյուս կողմը այն է, որ կանայք չունեն տարբերակ չհամաձայնվելու այս «մշտական հանձնարարության և պարտականությունների» հետ, քանի որ կա հստակ դերային բաժանում, և տղամարդիկ էլ, ցավոք, հայտնվել են

համակարգի նույն ծուղակի մեջ։ Հարցը ավելի է բարդանում գյուղերում և քիչ ռեսուրսներ ունեցող տարածքներում, որտեղ ուղղակիորեն այլ կերպ հնարավոր չի դառնում, բացի դրանից՝ կանայք և նրանց ընտանիքի անդամները և կերակրողները աղքատության և կորցնելու ամենօրյա վտանգի տակ են։ Իհարկե, վերոնշյալը չի վերաբերում բոլոր համայնքներին, քանի որ դրանք բազմաձև են, ռեսուրսները բաշխված են ոչ միանշանակ։

հաճախ այդ աշխատատեղը բացակայում է միայն որովհետև շատ գործարաններ, ենթակառուցվածքներ, ծառայություններ և հնարավորություններ կենտրոնացած են մարզկենտրոններում և Երևանում։ Սա վերաբերում է հատկապես Երևանին մոտիկ մարզերին։ Այս հնարավորությունները ավելի հասանելի են նորից տղամարդկանց, ովքեր նաև ունեն ավտոմեքենա և իրավունք ու դեր՝ կերակրողը լինելու։

Շատերը պատմում էին, որ տղամարդիկ կազմում են փոքր խմբեր, գալիս են Երևանում կամ մարզկենտրոնում աշխատանքի, վարձում են տներ, կամ ուղղակի երեկոյան կամ որոշ ինտերվալով վերադառնում են իրենց համայնքներ։ Բնավ չբացառելով այս իրավիճակի հոգնեցնող և պարտադրող լինելը տղամարդկանց համար, ցանկանում եմ նշել, որ զրույցների արդյունքում պարզ է դառնում, որ կանայք անգամ այս տարբերակը չեն դիտարկում, քանի որ մարզերում կա տրանսպորտի խնդիր։ Երբեմն տրանսպորտը չի աշխատում սահմանված ժամերին, երբեմն այն ավելի անհարմար է, քան աշխատանք չունենալը։ Բացի այդ, իհարկե, նրանք հիմնական խնամք իրականացնողն են հանդիսանում, մասնավորապես երբ չունեն այլ՝ չափահաս օգնողներ, ովքեր հանձն կառնեն երեխաներին կամ խնամքի

կարիք ունեցող այլ անդամներին հոգ տանելու գործը։ Այստեղ հաճախ լսում էի այլ խնդրի մասին. աղջիկ երեխաները արդեն մայրերին «օգնողներն ու բանիմացներն էին»։ Ավելի քիչ ռեսուրսներ ունեցող համայնքներում երեխաները երբեմն դպրոց չէին հաճախում, որպեսզի օգնեն նրանց։ Սրան զուգահեռ, տղա երեխաները ևս օգնում էին գյուղատնտեսական աշխատանքներում։ Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ կային ընտանիքներ, որտեղ լսում էի այն մասին, որ չեն ուզում իրենց անցյալը ու փորձառությունը կրկնել նաև երեխաների հետ, ուստի նրանց հնարավորինս հեռու են պահում հոգսերից և խնդիրներից։

Կանայք վարձատրվում են քիչ. ցավոք սրտի, որքան էլ մեր գործընկերները ներկայացնեն թվեր, որտեղ գրանցված աշխատող կանանց վճարվող վերահսկելի աշխատավարձը հավասար է տղամարդկանց աշխատավարձին, իրավիճակը, մասնավորապես մասնավոր ծառայություններ պատուցող կառույցներում և անհատների հետ համագործակցության ժամանակ մնում է քիչ փոփոխված։ Բազմիցս հանդիպել եմ մտքին, որ դաշտերում ու այգիներում աշխատում են հիմնականում կանայք՝ որպես բանվոր, և վարձատրվում քիչ։ Հաշվի առնենք նաև, որ որոշ աշխատանքներում ներգրավվելու ցանկությունը հաճախ ճնշվում է, անգամ եթե կինը ևս ունի հմտություններ և կարիք, քանի որ դեռևս կան «տղամարդկային» և «կանացի» աշխատանքներ։ Հարկ է նշել նաև, որ այս աշխատանքները, ըստ իմ զրուցակիցների, հաճախ են անհամապատասխան վարձատրվում, գործատուներ կան, ովքեր օգտվում են կանանց խոցելիությունից, երբեմն դրանք ազդում են կանանց անվտանգության, առողջության, ինչպես նաև բարի համբավի վրա՝ շահարկումների և որոշակի վերաբերմունքի առիթ դառնալով նրանց և նրանց սերունդների հանդեպ։

Միգրացիան. Միգրացիան, փաստորեն, սերտ կապված է պատերազմների, ռազմական գործողությունների, բնակլիմայական աղետների, սոցիալ-տնտեսական և

քաղաքական փոփոխությունների, բռնության շղթայի և շատ այլ իրավիճակների և դրանցից բխող հանգամանքերի հետ: Այն պայմանավորում է բազում դժվարություններ նոր համայնքում, որտեղ կինը արդեն այլ կարգավիճակ ունի՝ հարս է, կին է, մայր է, ներքին միգրանտ է, ունի այլ բարբառ, ավելի հարուստ կամ աղքատ գյուղից կամ քաղաքից է: Երբեմն էլ՝ դժվարություններն են պարարտ հող ստեղծում՝ միգրացիայի դիմելու համար:

Զրուցակիցներիցս ոմանք ընտանիք էին կազմել իրենց ծննդավայրից բավականին հեռու, և հարցին, թե «ինչպե՞ս են նրանք հայտնվել այդտեղ և ինչպե՞ս են ինտեգրվել» պատասխանում էին տարբեր ձևերով: Այդ պատասխանները երբեմն պարունակում էին տարիների ծանրությունը՝ մշուշված կենցաղով, պատվով, ամոթով, սիրով և շատ տարբեր երևույթներով, որոնք նրանց պահել են այդ բնակավայրում: Որոշ դեպքերում կանայք պատմում էին, որ իրենց ամուսնացրել են անծանոթ այդ տղաների հետ, որպեսզի իրենց հայրական ընտանիքները փրկվեն աղքատությունից, ոմանք էլ փրկվել են իրենք: Որոշ դեպքերում լսում էի արդեն հումորային դարձած պատումներ առ կանանց կյանքը, ում «փախցրել են», «առևանգել» իրենց բնակավայրերից և ամուսնացել, կազմել ընտանիք: Հազվադեպ, բայց հանդիպել են նաև պատմություններ փախստական կանանցից, կամ կանանցից, ովքեր հանդիսանում են ԼՂ-ից բռնի տեղահանված անձինք: Սրանից երբեմն հետևում էր, որ նրանք ժամանակի ընթացքում են սովորել ապրել այդ բնակավայրերում, ամուսնու ընտանիքի բարբառը և մշակույթը չհասկանալու ու այդ ժամանակ չկսիելու համար ենթարկվել են բռնության, զգացել միայնակ: Դժվարությամբ են սովորել նաև գյուղի հետ կապված հարցերի, նրբությունների մասին, ձեռք բերել հմտություններ ժամանակի

ընթացքում։ Եվ այս հիմքով, ոմանք նշում էին, որ այսքան տարի անց այլևս չեն պատկերացնում իրենց կյանքը առանց գյուղի՝ հատկապես այդ բնակավայրի, հավելելով, որ արդեն իրենց ծննդավայրը ու լեզուն սա է, ոչ թե հայրական տան ունեցածը։ Սա ցավալի փաստ է, որը հուշում է, որ գյուղում ապրող կանայք երբեմն բախվում են ինքնության ջնջվելու, կորուստների, նոր հարմարեցումների և բազմակի վերաինտեգրումների հարցերի։ Իհարկե, վերոնշյալը չի վերաբերում այն դրական դեպքերին և փորձառություններին, որոնց ևս ծանոթացել եմ բանավոր այս պատմությունների հավաքագրման ընթացքում։

Պատերազմը կանանցից ևս խլել է կյանքեր. Պատերազմի մասին խոսելիս մենք անդարդառնում ենք պատվարժան զինծառայողների և զոհերի, գերիների պատմություններին, սակայն կարևոր է նաև բարձրաձայնել որդեկորույս մայրերի, ընտանիքներ և տներ կորցրած կանանց, ավագ սերունդների կանանց մասին, ովքեր հայտնվել են տարածքներում, որտեղ բացառապես միայնակ են։ Եվ ցավոք, աղքատության, խտրականության, տարբերակման շղթան այս դեպքում ևս կանանց անմասն չի թողնում. խնդիրները շարունակվում են հիմա արդեն այլ բնակավայրում։ Պատերազմը առաջացնում է նաև բնապահպանական աղետներ, անդրադառնում բոլորիս կյանքի, կենսակերպի, մոտիվացիայի վրա։ Պատերազմի ազդեցությունն այնքան համատարած է, որ դժվար է տարբերակել այդ ազդեցությունների դրսևորումները մեր առօրյայում՝ զուգորդմամբ այլ խնդիրների ևս։

Կարծրատիպերը. կարծում եմ, որ արդեն ակնհայտ է, որ հիմնականում փոքր համայնքներում է, որ դեռ ավելի ուժեղ են արտահայտված կարծրատիպերը, նախապաշարմունքները առ այն, թե ինչի հանդեպ կարող է կինը հայտնել անհամաձայնություն։ Կարծրատիպերը և վախերը, ըստ իմ զրուցակիցներից մի քանիսի, թույլ չեն տալիս բարձրաձայնել, որ դու համաձայն չես ու կուզենաս փոխել այդ իրականությունը, կամ, որ ուզում ես դրա փոխարեն ընտրել կրթությունդ, շարունակել կարիերադ և այլն։ Սա դրսևորվում է ամենատարբեր տեղերում։ Զրուցակիցներիցս մեկը երիտասարդ մայր էր, և նշում էր, որ այսքան տարի անց որոշել է վերականգնել իր՝ կիսատ թողած կրթությունը համոզել ամուսնու ընտանիքին՝ համակարգչով միանալ գրաֆիկական դիզայնի և գովազդի մասին հեռավար դասերի։ Մյուս զրուցակիցս նշում էր, որ կանանց խմբով որոշել էին ոչ միայն տներում պատրաստել կաթնամթերք, այլև ներկայացնել ծրագիր, որով համայնքապետարանի հետ համատեղ կստեղծեին փոքր գործարան։ Գործարանի առկայությունը ավելի հեշտ և իրավական կդարձներ այդ խոշորացված համայնքի գյուղմթերքի արժանապատիվ վաճառքը և այլ մթերքների առքը, քանի որ գյուղում խանութներ չկային։ Ծրագրի աշխատանքները դադարել են, քանի որ ըստ իրեն, գյուղում անլուրջ էին վերաբերվում այդ մտքին, ինչպես նաև նշում, որ պետության կողմից բյուրոկրատիան և թղթաբանությունը անհասանելի են դարձնում նման մտքերի իրագործումները կանանց համար։ Այսպիսով, կանանց,

առահասարակ մարդկանց և որոշ երևույթների հանդեպ կարծրատիպային և վերապահումներով վերաբերմունքը շարունակում են խրախուսվել կամ գոնե թե չդադարել Հայաստանում, ինչով և ստեղծում են աղքատության ու բռնության շղթա, անվերջ սնում այդ շղթաները՝ սուտ խոստումներով, սպառնալիքներով, անհավասարությամբ և ռեսուրսների սակավությամբ։

Միայնության զգացումը. գյուղում ապրող մարդիկ հաճախ են միայնակ զգում, քանի որ պայքարում են ոչ միայն կառավարելի, այլև անկառավարելի, իրենց պատասխանատվությունից դուրս երևույթների դրսևորումների դեմ, ինչպես օրինակ՝ եղանակը ու դրա հետևանքները իրենց ամբողջ տարվա հույսի ու եկամտի վրա։ Բոլոր զրույցներում կարմիր թելով շարունակվում էր խոսք գնալ պետության

անտարբերության, կառույցների՝ կողմնակալ և կապիտալիստական մոտեցումների, ռեսուրսների սակավության, պատերազմի կորուստների հանդեպ ջղայնության, կանանց՝ սուր առողջական խնդիրներ ունենալու և միևնույն ժամանակ լքված լինելու մասին։ Զուգահեռ ոչ ուղղակի խոսքով, ֆոնային հնչում էր պահանջը ու նեղացվածությունը. երբեմն ուղղակի գյուղացին մենակ ու լքված էր զգում, անարդար, երբեմն ուղղակի կինը մենակ էր

զգում ու «գողացված, փոխկախյալ», երբեմն ամեն ինչ այնքան շատ էր թվում, համայնքներում խնդիրները ու պետության ստեղծած դժվարությունները այնքան անտանելի, որ նրանք երկար պատմելուց հետո ուղղակի հուզվում էին ու լռում: Տղամարդիկ դուրս էին գալիս զրույցից, շարունակում գյուղի գործերը, անընդհատ հիշեցնում, որ իրենց համար օրը բաժանված է հստակ ժամերով և ունի հստակ բաղադրիչներ, և գյուղացին ունի վերջնաժամկետներ, որոնց ուշացման դեպքում անասունները կարող են կորչել, մսալ սարերում, արդեն չորացած խոտը կարող է նորից թրջվել, երեխաները կարող են ուշանալ դասերից, կանայք կարող են կորցնել այդքան դժվարությամբ ձեռքբերված օրը՝ կողքի համայնքում բժշկին հանդիպելու: Արագացնում էին այնքան, որ բառերը երբեմն իրար կողք էին լցնում, երբեմն նայում ինձ, որպես «դրսից գնացողի», ով կլսեր նրանց, կասեր, թե այլ տարածքներում ինչպե՞ս է իրավիճակը զարգանում: Երբեմն այդ բառակույտի ու հույզերի, անհասցե պահանջների մեջ ես խառնվում էի, փորձում դասավորել այդ բառերն իրար կողք, ստանալ նախադասություններ. «բալիկ ջան, ես պատերազմում կորցրեցի տղուս, էդ օրն, որ իմացա, մեգ էլ հիշեմզը, որ հետո զարթնել եմ Լեննագան՝ հիվանդանոցը. ասին ինսուլտ եմ տարե: Հմի ես էլ ոչ կրնամ բախչա փորեմ, ոչ կերտամ բաղը, ոչ էլ, թոշակս հազիվ ընձի կհերիքե: Տղես ու աղջիկս էլ մսացել են ընձի գերի, ես չեմ կրնա էրտամ, իրանք էլ չեն էրտա. ու՞ր էրտան, ամենքն մի ցավի տեր են»:

Այս ամենին զուգահեռ, պետական աջակցության ծրագրերը, որոնց կհանդիպեք պատկան մարմինների պաշտոնական էջերում, համայնքապետարանների հայտարարություններում, իհարկե, գործում են: Սակայն ոչ բոլորն էին նշում, որ իրենց համայնքներում դրանք իրագործվում են ճշմարտացի և ամբողջությամբ: Որոշ դեպքերում այդ ծրագրերը ունեն վերանայումների, ճկունության կարիք, որոշ դեպքերում մարդիկ տեղյակ չեն դրանց դիմելու կարգի և հետևողական լինելու ձևերի մասին, ուստի հրաժարվում են և այստեղ կանգ է առնում պետություն- քաղաքացի դեռևս չսկսած համագործակցությունը: Հիմանականում բոլոր զրույցներում հնչել են

առաջարկներ՝ վերանայելու ծրագրերը և հանդիպման գնալու և լուսաբանելու հենց գյուղում ապրող մարդկանց անունից։

Առողջապահական ծառայությունների հասանելիությունը. համայնքներում դժվար հասանելի են նաև առողջապահական ծառայությունները, իսկ հասանելի լինելու դեպքում մատչելի չեն ու այստեղ ևս բախվում ենք խնդիրների։ Այսինքն ունենք իրավիճակ, երբ փոքր համայնքներում, որոշ գյուղերում անգամ չկային բուժկետներ, իսկ առկայության դեպքում էլ դրանք հագեցած չեն ծառայություններով։ Մյուս կողմից, բուժկետի անձնակազմը նույն բնակավայրից է, ճանաչում են բոլորը իրար և ստեղծում անհարմարություն՝ գաղտնիության սկզբունքի պահպանման կարևոր գործում։

Գիտենք նաև, որ առողջությանը վերաբերելի հարցերը բազմաշերտ են, դրանք ենթադրում են հերթագրումներ, գումարի և ծառայության առկայություն, բժշկի հետագա վերահսկողության և երբեմն բազմակի այցերի կարիք։ Կանայք խոսում էին, որ որոշ ակնհայտ դեպքերում օգտվում են հանրային տրանսպորտից, եթե այն առկա է։ Որոշ դեպքերում, երբ կարող են իրենց թույլ տալ՝ օգտվում են տաքսի ծառայություններից, ունեն ավտոմեքենա կամ հավաքվում են մի քանի հոգով և այցելում բժշկական հաստատություն։ Այս պրակտիկան, իհարկե, հաջորդ անգամների այցերի համար կարող է արդյունավետ չաշխատել։

Որոշ դեպքերում, երբ կան կնոջ առողջությանը վերաբերելի հատուկ դեպքեր, կանայք չունեն հնարավորությունը դրանցով զբաղվելու՝ մի քանի հստակ պատճառներով։ Դրանք են՝

- Ռեսուրսների անբավարարություն
- Խնդրի մասին բարձրաձայնելու դժվարություն և խարան
- Գիտելիքի բացակայություն և հմտությունների պակասություն
- Հնարավորությունների և ծառայությունների բացակայություն, քանի որ այդ ծառայությունների առկայության կարիքը անտեսված է
- Բռնություն, հիվանդանոց գնալու և կնոջ առողջության հարցեր քննարկելու պրակտիկային ուղղված՝ տղամարդկանց բացասական վերաբերմունք և նախկին փորձ

Կանանց առոողջությանը վերաբերելի հարցերը դիտարկվում էին միայն այն տեսանկյունից, որ որոշ տեղերում կա կին թերապևտ, ում մոտ կպատմեն՝ ի՞նչն է ցավում ու կանցնեն առաջ, երբեմն չունենալով նաև բուժման ցանկություն կամ հանրավորություն։

Կանանց առողջության վատթարացման պատճառները բազմազան են։ Իհարկե, ակնհատ է, որ գյուղում ապրելը և հոգսաշատ առօրյան, ծանր աշխատանքները, տարբեր ռեժիմը և տարբեր հարցեր դժվարացնում են նրանց կյանքը, հանգեցնում են առողջական խնդիրների ստեղծմանը կամ խորացմանը։ Բացի դրանից, նաև բնակլիմայական աղետները և զուտ փոփոխությունները փոխել էին նաև զրուցակիցներիս կամ նրանց ընտանիքի ամենատարբեր սեռատարիքային խմբերի անձանց կյանքն ու առողջության վիճակը. որոշ տեղերում անընդհատ խոնավ եղանակը և պայմանները, որոշ տեղերում անընդհատ շոգն ու տապը, խմելու ջրի որակը կամ դրա իսպառ բացակայությունը, գործարանների, հանքերի առկայությունը, ջրհեղեղների վտանգը, սննդի բացակայությունը և դրա որակը պայմանավորում էին պատկեր, որը անխուսափելիորեն հայտնվել է այս անձանց և շատերիս կյանքում։ Եվ

մարդիկ, այդ թվում նաև ես, որպես գյուղում փորձառություն ունեցող անձ, պատմում էին, որ գյուղից տեղափոխվելուց, հետո նորից հետ գալուց, իրենց առողջական հարցերով զբաղվելուց հետո անգամ որոշ հարցեր այդպես էլ մնացել են անլուծելի։

Այս հարցերի շարքում իր կարևոր տեղն ունի սոցիալական ինտեգրման և հոգեբանական առողջության և բարեկեցության հարցը։ Իհարկե, դժվարությունները և տարբեր հարցեր բոլորիս մտահոգում են, մասնավորապես սակավ ռեսուրսներ և տարբեր տխուր փորձառություններ ունեցող երկրում, սակայն գյուղում մարդիկ նաև անընդհատ տագնապում են, գործ ունենում անկառավարելի եղանակային վերապահումների և իրավիճակների հետ, անընդհատ հուսահատություն զգում, բախվում մենակության, երբեմն նրանց պատմությունները լսում են միայն տան պատերը՝ երեկոյան հավաքների ժամանակ, իսկ կանանց պատմությունները, ցանկություններն ու տանջանքները՝ հավանաբար միայն իրենք։

Այս մենակությանը որպես հակադիր՝ հայտնվում է համայնքային զգացումը և համայնքներում ինքնակազմակերպման և հոգատարության դրական առօրյան։ Զրուցակիցներս պատմում էին, որ բախտակից լինելն է, որ իրենց դարձրել է այսքան հոգատար։ Նրանք ուրախությամբ նշում էին, որ ամեն ինչ էլ կանցնի, երբ ունես լավ հարևաններ և ընկերներ, դռնկից բարեկամներ ու ազգականներ, ովքեր ականջալուր են քո ցավին, անգամ երբ ոչինչ փոխել չեն կարող։

Գյուղում ապրելը ու հոգսերը ծերացնում են մարդկանց, նաև ազդում հատկապես կնոջ առողջության վրա։ Ցավալիորեն, ես անդադար մտքումս պարտվում էի հնարածս մաթեմատիկական խաղում. ամեն անգամ տուն մտնելիս և իմ զրուցակից կանանց և տղամարդկանց նրանց տարիքը հարցնելուց հետո պարզվում էր, որ գուշակել էի ավելի մեծ տարիք, քան իմ զրուցակիցներից ոմանք ունեին։ Իմ գուշակությունները նրանց տարիքի մասին գրեթե միշտ սխալ էին, սա չի տարածվում բոլոր դեպքերի վրա. այստեղ

չկան ընդհանրացումներ։ «Կանայք ծերանում են իրենց հոգսերից, աշխարհի հոգսերից, ու շատ բաներից, որոնք դու դեռ չես հասկանա», - ասաց զրուցակիցներիցս մեկը, ու խմորը դանդաղ մասերի բաժանեց՝ հաց թխելու համար։

Երեխաների խնամքի և ծնողավարման դժվարությունները. Ընտանիքները հաճախ են թողնում երեխաներին մեծերի խնամքին ու փորձում գնալ դաշտեր՝ գյուղատնտեսական աշխատանքներ իրականացնելու։ Ստացվում է, որ կա՛մ պետք է համաձայնել ապրել մեծերի կամ ամուսնու ընտանիքի այլ անդամների հետ, ինչը բավականին շատ է հանդիպում գյուղերում։ Կա՛մ էլ ինքդ վերցնես երեխաներիդ հետդ, տանես դաշտ և անտառ։ Գյուղի կանայք երկու այլընտրանքի մասին էլ խոսում են։ Երկուսի դեպքում էլ դժվարություններ կան, բաց ես թողնում երեխայիդ դաստիարակության, նրա հետ շփվելու ու ժամանակ անցկացնելու քո հնարավորությունը, մեծերը ստիպված վերցնում են այդ դերը և սահմանում գրաֆիկ։ Մյուս դեպքում կանանցից մեկը պատմում էր, որ ամեն անգամ այնքան էր լացում երեխաներին տանը թողնելիս ու դաշտ գնալիս, որ մի օր դադարեց, ու սկսեց երեխաներին իր հետ տանել։ Նա ասում էր, որ իր երեխաների սիրած խաղալիքը կարտոֆիլն ու հողն են։ Կանանցից շատերը պատմում էին, որ ուրախ են, որ ունեն աղջիկ երեխա, ով օգնում է մյուս երեխաների, տան մեծերի և տղամարդկանց խնամելու, սնելու, և այլ կենցաղային հարցերում. տեսնես այս դեպքում ո՞րն է այս ավագ դուստրերի սիրած խաղալիքն ու մանկության խաղը։

Կանանցից ոմանք նշում էին, որ իրենց երեխաներին մշտապես փորձել են հեռու պահել դժվար աշխատանքներից, քանի որ ավելի կարևորել են դասերն ու մանկական շփումները, անվտանգ միջավայրերը, բացի դրանից՝ խուսափել են երեխաների համար սեփական ապագայի նման ապագա պատկերացնելուց և ձևավորելուց։

Ջրի խնդիր. Խմելու ջրի խնդիրը նշվել է գրեթե բոլոր բնակավայրերում. կանայք նշում էին, որ մի քանի տարի առաջ անգամ խմելու ջուր չեն ունեցել գյուղում, կամ ունեցել են



մի աղբյուրից, որտեղ բոլորով հերթ են կանգնել, մեծ ամաններով ջուրը տեղափոխել տուն: Անձրևաջրերը հավաքել են, օգտագործել են որպես ոռոգման ջուր, կենցաղային օգտագործման պաշար: Ստացվում է, որ եթե կինը պետք է լվացք աներ, ինչն օրինակ մի քանի տարի առաջ մեր գյուղի, ու իմ, մորս ու տատիս պարագայում ձեռքով էր՝ ոչ թե լվացքի մեքենայով, ապա նա պետք է ոտքով գնար աղբյուր, այդ ջուրը ձեռքով հասցներ տուն, լվացք աներ, ապա իրականացներ կենցաղային այլ գործեր: Ինչպես գիտեք՝ սրանք բոլորը պահանջում են ֆիզիկական ակտիվություն, իրենցից ներկայացնում են ծանր աշխատանք: Բացի դրանից, ոռոգման ջրի բացակայությունը կամ անհավասար բաշխվածությունը բնակավայրերում աջացնում է խնդիր. բերքը չի ստանում ջուր, անասունները ևս չեն ունենում ջրի պաշար, ինչը լավագույն դեպքում դժվարացնում է բանջարաբուծությունն ու մշակաբույսերի և ծառերի աճը, վատագույն դեպքում՝ դադարեցնում որոշ աշխատանքներ: Սրա հիմքով է նաև, որ զրուցակիցներիցս ոմանք նշում էին, որ տարբեր ժամանակներում իրենց

բնակավայրերում գյուղատնտեսական աշխատանքների բնույթը փոխվել է. ինչ որ մթերքներ այլևս չեն աճեցնում, որովհետև բնակավայրն այլևս հարմար չէ այդ

գործընթացի համար, իսկ երկրում՝ ընդհանուր առմամբ կրճատվել են անասնապահության և մշակովի հողերի օգտագործման պրակտիկաները։

Այս և այլ ՝ կենսական կարևոր հարմարությունների բացակայությունը, կամ գյուղում անհավասար բաշխումը դժվարեցնում է գյուղաբնակ անձանց, հատկապես՝ կանանց կյանքը և առօրյան, ինչպես նաև պատճառ հանդիսանում գյուղատնտեսության անկման։

Հետազոտության ընթացքում ինձ նաև հետաքրքրում էր, թե այս ամենին զուգահեռ, որպես մարդ, որպես կին ի՞նչ երազանքներ, ցանկություններ, ուղերձներ ունեին զրուցակիցներս։ Այս հարցին լսածս միևնույն ժամանակ միանման և այսքան իրարից տարբեր պատասխաններն իմ առաջ բացեցին նոր հետաքրքրություն և ցանկություն՝ տարածք տալու այդ կանանց՝ մտածելու իրենց անձի, ես-ի, ցանկությունների, պատմության, հուշերի, սիրո և կորստի զգացման, ջղայնությունների, մարդկայնության և շատ այլ՝ մարդակենտրոն հույզերի մասին, որոնցից ժամանակավորապես կտրվում կամ վերացարկվում էին զրուցակիցներս՝ տեղ տալով առօրեականությանն ու մսալով «ուժեղ»։ Հարցին ի պատասխան սովորաբար լսում էի միայն իղձեր՝ երեխաների, ամուսինների, մեծահասակների, գալիք սերունդների, երկրի և հողի, զինվորների բարօրության, վառ ապագայի, խաղաղության և անվտանգության մասին։ Եվ երկրորդ հարցով, երբ փորձում էի նրանց վերադարձնել ներկա, դեպի ես-ը, քանի որ հարցս հենց

իրենց անձի մասին էր, նրանք սկսում էին հուզվել: Ոմանք պատասխանում էին, որ եթե այս թվարկածներս լավ լինեն, իրենք էլ կլինեն լավ, եթե խաղաղություն լինի՝ անձրևը չի կարող նեղացնել իրենց, եթե ապահովություն լինի՝ ջրհեղեղի վտասները կանցնեն ու կանցնեն: Ոմանք խանդավառությամբ խոսում էին երիտասարդության երազանքների, կիսատ հուշերի, իղձերի, կարիերիայի, սերերի, երազանքների մասին, ոմանք խոսում էին լրիվ այլ իրականության, լրիվ այլ անձի ու այլ ճակատագրի ցանկության մասին և բոլորի պատասխաններն այնքան կարևոր և այնքան հուզառատ էին: Ոմանք կես-կատակ, կես- լուրջ նշում էին, որ «հարս» կուզեն ունենալ, «օգնող մի կին», ինչից հետևում է, որ հոգսերը թեթևացնելու համար կանայք դիտարկում էին մեկ այլ կնոջ՝

անկախ նրանից, ունեի՞ն այդ հնարավորությունը, թե ոչ, և անկախ նրանից, որ տանը կային այլ անդամներ, ովքեր կարող էին հանդիսանալ այդ օգնողները՝ ցանկության դեպքում:

Տղամարդիկ անզորություն են զգում, անկայունություն, անվերջ խոսում են ջղայնության, հիասթափության մասին, հարցեր հղում, որոնց պատասխանները ես, որպես իրենց նման մի քաղաքացի և գյուղում ծնված մարդ՝ դժվարանում էի պատասխանել: Մեր զրույցների ընթացքում որոշ հարցեր մտում էին օդում. կարծես մի բան էինք քննարկում, որը ավելի շատ փիլիսփայական, քան կիրառելի հարց էր:

Գյուղում տարբեր սերունդների կանայք բողոք ունեն, ես ականատեսն ու ականջալուրն եմ եղել բողոքի առ պետություն, առ երկինք, առ դաշտերը, առ ամուսինները և համակարգը, առ հոգատարության ու խնամքի՝ կանանց պարանոցից փաթաթված անտեսանելի, բայց շատ կայուն և հստակ պարանը, առ երեխաների ապագան՝ իրենց չստացված անցյալի ֆոնին: Կանայք վախեր ունեն, ափսոսանքներ, կանայք աղոթք ունեն, կանայք փակվում են տներում և պարզվում է, որ դուրս չեն գալիս արդեն տարիներ, որովհետև պատերազմը խլել է նրանց հանգստությունը, խլել է նրանց տան անդամներին, երկինքը խլել է արևի հնարավորությունը, որոշ տեղերում էլ՝ անձրևի:

Առաջարկություններ

- Պետական մարմիններին և կից գործող աշխատանքային և տեսչական մարմիններին առաջարկում եմ իրականացնել այցեր, ունենալ հանդիպումներ խնդիրները կրողների հետ՝ տարվա ընթացքում մի քանի անգամ
- Ծրագիր մշակողներին և վերահսկող մարմիններին առաջարկում եմ վերանայել գյուղատնտեսական պետական աջակցության ծրագրերի մատչելիությունը, ճկունությունը և տրամադրման կարգը
- Բնապահպանական խմբերին առաջարկում եմ իրականացնել ջատագովություն և շարունակել առկա շարժումը՝ ի շահ հատկապես բնակլիմայական աղետի գոտիներում ապրող քաղաքացիների կյանքի և առողջության անվտանգության պահպանման հարցերի
- Դպրոցներում և կրթական այլ հաստատություններում առաջարկում եմ կրթական ծրագրերում ավելացնել դասեր գյուղատնտեսության, բնապահպանության, կլիմայական աղետների և մարդածին վնասների մասին՝ իրազեկելու և գալիք սերնդի կյանքում կանխելու կապիտալիզմի հիմքով մղումները
- Ֆեմինիստական կառույցներին, կանանց իրավունքներով զբաղվով պետական և ոչ պետական և ոչ առևտրային կառույցներին առաջարկում եմ իրականացնել հանդիպումներ՝ կանանց պատմությունների հավաքագրման, արխիվացման, ֆիլմերի, հոդվածների պատրաստման, նրանց իրազեկման և հմտությունների տրամադրման առիթով
- Նախարարություններին առաջարկում եմ տրամադրել մարդակենտրոն վարկեր և ֆինանսեր, որոնք ստանալու պարագայում քաղաքացին երաշխիք կունենա չկրել վնասի փոխհատուցման պահանջը՝ բնակլիմայական աղետից հետո և չփոխհատուցել կամ այլ վարկով չսառեցնել այդ ծախսերը

- Պետական համապատասխան կառույցներին առաջարկում եմ ուշադրության կենտրոնում պահել կանանց առողջապահական հարցերը և ռեսուրսներ հատկացնել հատկապես գյուղերում և խոշորացված համայնքներում նրանց առողջապահական իրավունքի արժանապատիվ իրացման համար
- Կազմակերպություններին առաջարկում եմ հավաքագրել մարդասիրական օգնություն և դրանց տրամադրումը համակարգել՝ համագործակցելով տարբեր կառույցների, կոալիցիաների և խմբերի հետ՝ ստեղծելով դիմակայուն ցանց։

Շնորհակալություն

Սեդա Հակոբյան, 2025 թ.